պենական կալուածքում չինել է տալիս իր՝ «Ամառնային ժամանակի հովանոցը»։ Կամ թէ Խորենացու այս խօսքերը «Եթէ զբուն պատուական զձեր սեփական Պահլաւն (խընդրէք), զայն անդրէն ի ձեզ դարձուցից եւ զքեզ (Անակ) փոխաւորեցից» ամբողջապէս Բահլաւների տոհմական Տայոց-աշխարհի Պալխարի ստորոտի Պահլաւի մասին է։ Եթէ հետաքրքրուինք Պարխարեան լշ-ով, Հինդ-կարի լեռներով, վտակով, Բահլ առուակով եւ աւանով, կը գտնենք Պահլաւների բնա-վայրը։

Այս Պահլ-Բահլ արմատը երեւում է, որ շատ հին է, ո՛չ միայն Քալդէական-Բաբելա-կան Բահալի, այլ մինչեւ անգամ Ալիւս-Իրիս գետերի, Ամասիայի Բալլիաս թագաւորի շրջանների (Ք. Ծ. 3000 տարի առաջ) հետ կապ ունի, որով Բահլի ծագումը պէտք է փնտռել ո՛չ թէ Բագտրիայում, այլ Բաբե-լոնում եւ Ամասիայում։ Եթէ հետեւինք Ագաթանգեղոսին, Փաւստոսին, Փարպեցուն եւ Խորենացուն, Լուսաւորիչը պարթեւա-կան աշխարհի, Պահլաւ գաւառի տէրն է, Արշակունիների տոհմակից եւ ժառանգորդ, հետեւաբար սրա կալուածքը չէր կարող դուրս գալ Ճորոխի Աւազանից։ Այդ կա-լուածքը անպայման Անակի վիճած եւ Ար-տաշրի խոստացած Բահլն էր, ո՛չ թէ Բակ-տրիայի Բահլ առաւատինը, այլ Պալխարի ստորոտի Բահլն է իր շրջակայքով։